Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-690-30.10.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ *ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ* ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մաքսային կարգավորման մասին» 2022 թվականի սեպտեմբերի 14-ի ՀՕ-353-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) *13-րդ հոդվածի 2-րդ մասում «ապրանքների ներմուծումը» բառերը փոխարինել «ապրանքների՝ մաքսային ընթացակարգով հայտարարագրումը (բացառությամբ «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի)» բառերով:*

Հոդված 2. *Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:*

Հոդված 3. *Օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:*

Հոդված 4. *Օրենքի 187-րդ հոդվածի 10-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:*

Հոդված 5. Օրենքի 189-րդ *հոդվածի՝*

1. 3-րդ մասից հետո լրացնել 3.1-ին եւ 3.2-րդ մասեր՝ հետեւյալ բովանդակությամբ՝

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված առեւտրային գործունեության թույլտվությունը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող մաքսային հսկողության գոտիներում տրամադրվում է մրցույթի հիման վրա, որի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ պետական գույքի կառավարման ոլորտի լիազոր մարմինը կամ համայնքի ղեկավարը կնքում է մաքսային հսկողության գոտի հանդիսացող համապատասխան տարածքն ուղղակի եղանակով վարձակալության տրամադրման պայմանագիր:

3.2. Սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված մրցույթի իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը:».

2. 6-րդ մասից հանել «հսկողության գոտիներին ներկայացվող տեխնիկական պահանջները և մաքսային» բառերը.

3. 6-րդ մասից հետո լրացնել նոր 7-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«7. Մաքսային հսկողության իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով մաքսային հսկողության գոտիներին ներկայացվող տեխնիկական պահանջները կարող է սահմանել Կոմիտեն:»:

Հոդված 6. *Օրենքի 212-րդ հոդվածի 7-րդ մասում «Կառավարությունը սահմանում է» բառերը փոխարինել «Մաքսային հսկողության իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով Կոմիտեն կարող է սահմանել» բառերով:*

Հոդված 7. *Օրենքի 229-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:*

Հոդված 8. Օրենքի 256-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1-ին մաս հետեւյալ բովանդակությամբ՝

«1.1. Միության մաքսային օրենսգրքի 402-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետին համապատասխան՝ իրավաբանական անձին մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկելու պայման է հանդիսանում իրավաբանական անձի անձնակազմում մաքսային մարմնի սահմանած կարգով մաքսային ձեւակերպումների մասնագետի որակավորում ստացած առնվազն երեք անձի առկայությունը:»:

Հոդված 9. *Օրենքի 260-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:*

Հոդված 10. Օրենքի 261-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ՝

«1.1. Մաքսային ներկայացուցիչների ռեեստրից մաքսային ներկայացուցիչը հանվում է սույն օրենքի 256-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված պայմանի չպահպանման դեպքում:»:

Հոդված 11. Օրենքի 262-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ՝

«5. Մաքսային ներկայացուցիչները պարտավոր են ապահովել իրենց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանված սակագների մասին տեղեկատվության հրապարակայնությունը՝ Կոմիտեի կողմից սահմանված կարգով:»:

Հոդված 12. Օրենքի 284-րդ հոդվածը լրացնել 5-րդ, 6-րդ եւ 7-րդ մասերով՝ հետեւյալ բովանդակությամբ՝

«5. Անմաքս առեւտրի խանութների վայրերը սահմանում է Կոմիտեն՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության հետ համաձայնեցմամբ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված վայրերում կարող են գործունեություն իրականացնել սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով նախաորակավորված անձինք՝ մրցույթի արդյունքում:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված մրցույթի իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 13. Օրենքի 285-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 3-րդ կետով հետեւյալ բոնվանդակությամբ՝

«3) նախաորակավորված լինելու եւ սույն օրենքի 284-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով կազմակերպված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու մասին տեղեկություններ:»:

Հոդված 14. Օրենքի 287-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1-ին մաս հետեւյալ բովանդակությամբ՝

«1.1. Անմաքս առեւտրի խանութի տիրապետողների ռեեստրից անմաքս առեւտրի խանութի տիրապետողին հանելու հիմք է հանդիսանում անմաքս առեւտրի խանութի տիրապետողի կողմից նախաորակավորման արդյունքում ստանձնած պարտավորությունների չկատարումը:»:

Հոդված 15. Մինչեւ սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելը, անմաքս առեւտրի խանութների համար Կոմիտեի կողմից սահմանված վայրերում գործունեություն կարող են իրականացնել մինչեւ Օրենքի 284-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նախաորակավորման կարգի ընդունումը անմաքս առեւտրի խանութի տիրապետողների ռեեստրում ներառված անձինք:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հոդված 17. Սույն օրենքով նախատեսված *ենթաօրենսդրական նորմատիվ* իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում:

Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-690-30.10.2023-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մաքսային կարգավորման մասին» 2022 թվականի սեպտեմբերի 14-ի ՀՕ-353-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասում «ապրանքների ներմուծումը» բառերը փոխարինել «ապրանքների՝ մաքսային ընթացակարգով հայտարարագրումը (բացառությամբ Մաքսային տարանցում մաքսային ընթացակարգի)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 4. Օրենքի 187-րդ հոդվածի 10-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված ~~1~~5. Օրենքի 189-րդ հոդվածի՝

1. 3-րդ մասից հետո լրացնել 3.1-ին եւ 3.2-րդ մասեր՝ հետեւյալ բովանդակությամբ՝

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված առեւտրային գործունեության թույլտվությունը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող մաքսային հսկողության գոտիներում տրամադրվում է մրցույթի հիման վրա, որի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ պետական գույքի կառավարման ոլորտի լիազոր մարմինը կամ համայնքի ղեկավարը կնքում է մաքսային հսկողության գոտի հանդիսացող համապատասխան տարածքն ուղղակի եղանակով վարձակալության տրամադրման պայմանագիր:

3.2. Սույն հոդվածի 3.1-ին մասով նախատեսված մրցույթի իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը:»~~:~~.

2. 6-րդ մասից հանել «հսկողության գոտիներին ներկայացվող տեխնիկական պահանջները և մաքսային» բառերը"

3" 6-րդ մասից հետո լրացնել նոր 7-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ"

«7" Մաքսային հսկողության իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով մաքսային հսկողության գոտիներին ներկայացվող տեխնիկական պահանջները կարող է սահմանել Կոմիտեն:»:

Հոդված 6. Օրենքի 212-րդ հոդվածի 7-րդ մասում «Կառավարությունը սահմանում է» բառերը փոխարինել «Մաքսային հսկողության իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով Կոմիտեն կարող է սահմանել» բառերով:

Հոդված 7. Օրենքի 229-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված ~~2~~8. Օրենքի 256-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1-ին մաս հետեւյալ բովանդակությամբ՝

«1.1. Միության մաքսային օրենսգրքի 402-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետին համապատասխան՝ իրավաբանական անձին մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկելու պայման է հանդիսանում իրավաբանական անձի անձնակազմում մաքսային մարմնի սահմանած կարգով մաքսային ձեւակերպումների մասնագետի որակավորում ստացած առնվազն երեք անձի առկայությունը:»:

Հոդված 9. Օրենքի 260-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված ~~3~~10. Օրենքի 261-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ՝

«1.1. Մաքսային ներկայացուցիչների ռեեստրից մաքսային ներկայացուցիչը հանվում է սույն օրենքի 256-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված պայմանի չպահպանման դեպքում:»:

Հոդված ~~4~~11. Օրենքի 262-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ՝

«5. Մաքսային ներկայացուցիչները պարտավոր են ապահովել իրենց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանված սակագների մասին տեղեկատվության հրապարակայնությունը՝ Կոմիտեի կողմից սահմանված կարգով:»:

Հոդված ~~5~~12. Օրենքի 284-րդ հոդվածը լրացնել 5-րդ, 6-րդ եւ 7-րդ մասերով՝ հետեւյալ բովանդակությամբ՝

«5. Անմաքս առեւտրի խանութների վայրերը սահմանում է Կոմիտեն՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության հետ համաձայնեցմամբ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված վայրերում կարող են գործունեություն իրականացնել սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով նախաորակավորված անձինք՝ մրցույթի արդյունքում:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված մրցույթի իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված ~~6~~13. Օրենքի 285-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 3-րդ կետով հետեւյալ բոնվանդակությամբ՝

«3) նախաորակավորված լինելու եւ սույն օրենքի 284-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով կազմակերպված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու մասին տեղեկություններ:»:

Հոդված ~~7~~14. Օրենքի 287-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1-ին մաս հետեւյալ բովանդակությամբ՝

«1.1. Անմաքս առեւտրի խանութի տիրապետողների ռեեստրից անմաքս առեւտրի խանութի տիրապետողին հանելու հիմք է հանդիսանում անմաքս առեւտրի խանութի տիրապետողի կողմից նախաորակավորման արդյունքում ստանձնած պարտավորությունների չկատարումը:»:

Հոդված ~~8~~15. Մինչեւ սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելը, անմաքս առեւտրի խանութների համար Կոմիտեի կողմից սահմանված վայրերում գործունեություն կարող են իրականացնել մինչեւ Օրենքի 284-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նախաորակավորման կարգի ընդունումը անմաքս առեւտրի խանութի տիրապետողների ռեեստրում ներառված անձինք:

Հոդված ~~9~~16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հոդված ~~10~~17. Սույն օրենքով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (*Կ-690-30.10.2023-ՏՀ-011/1*) ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջար-կություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժո-ղովի որոշումը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի վերնագիր**	Հաշվի առնելով նախագծում առաջարկվող նոր հոդվածները, նախագծի վերնագրում առաջարկվում է «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառից հետո լրացնել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերը:	Ընդունվել է: Նախագծի վերնագրում կատարվել է լրացում:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	«Մաքսային կարգավորման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվում է «մինչև այդ ապրանքների ներմուծումը» բառերը փոխարինել «մինչև այդ ապրանքների՝ մաքսային ընթացակարգով հայտարարագրումը (բացառությամբ «Մաքսային	Ընդունվել է: Նախագծով նախատեսվել է նոր 1-ին հոդված՝ հետևյալ բովանդակությամբ՝ «***Հոդված 1.*** «Մաքսային կարգավորման մասին» 2022 թվականի սեպտեմբերի 14-ի ՀՕ-	Ընդունվել է:

			տարանցում» մաքսային ընթացակարգի)» բառերով՝ հետևյալ հիմնավորմամբ. Հաճախակի առկա են լինում իրավիճակներ, երբ խոշոր գործարանների կամ արտադրամասերի համար համապատասխան սարքավորումների կառուցման համար ապրանքներ ներմուծողները պայմանադիր կողմից չհամաձայնեցված գործողությունների արդյունքում ապրանքների բաղադրիչներից որևէ մեկը ներմուծում են ավելի վաղ, քան կայացվում է չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշում կամ այդպիսի որոշման կայացման համար դիմում է ներկայացվում մաքսային մարմիններին: Առկա են դեպքեր նաև, երբ ապրանքների բաղադրիչներից որևէ մեկի ներմուծումից հետո է միայն տնտեսվարողներին պարզ դառնում, որ ապրանքների դասակարգման կանոններին համապատասխան վերջնական ապրանքը մեկ միասնական ծածկագրով դասակարգվել չի	353-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) *13-րդ հոդվածի 2-րդ մասում «ապրանքների ներմուծումը» բառերը փոխարինել «ապրանքների՝ մաքսային ընթացակարգով հայտարարագրումը (բացառությամբ «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի)» բառերով:»* Վերոգրյալով պայմանավորված՝ փոփոխվել են առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի հոդվածների համարակալումները:	

			կարող: Վերոգրյալ դեպքերի արդյունքում տնտեսվարող սուբյեկտները կրում են ժամանակային և ֆինանսական ծախսեր, ինչից խուսափելու համար առաջարկվում է չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումների կայացումը պայմանավորել ոչ թե ապրանքների ներմուծման (սահմանահատման) հանգամանքով, այլ մաքսային ընթացակարգով հայտարարագրմամբ (սահմանահատումից հետո)՝ հաշվի առնելով նաև այն, որ տվյալ ապրանքները այդ ողջ ժամանակահատվածում գտնվելու են մաքսային հսկողության ներքո:		
3.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 2-րդ հոդված**	Առաջարկվում է «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած: Նշված կետով սահմանված է, որ մաքսային վճարների պարտավորությունների կատարման ապահովման նպատակով ներկայացվող երաշխիքում նշվում է՝ պայման՝ պետական գանձապետարանի հաշվին կամ Եվրասիական	Ընդունվել է: Նախագծում լրացվել է նոր հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. *«**Հոդված 2.** Օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:»* Վերոգրյալով պայմանավորված՝ փոփոխվել են առաջին	Ընդունվել է:

			տնտեսական միության անդամ պետությունների միջազգային պայմանագրով սահմանված հաշվին երաշխիքով երաշխիք տված անձի պարտավորությունների կատարման համար դրամական միջոցների առկայության փաստը: Հաշվի առնելով այն, որ տվյալ պարագայում խոսքը վերաբերում է պարտավորությունների կատարման՝ բանկերի, վարկային կազմակերպությունների կամ ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվող երաշխիքով ապահովմանը, մինչդեռ համապատասխան հաշվին դրամական միջոցների առկայությունն առնչվում է պարտավորությունների կատարման ապահովման այլ եղանակին, ուստի տվյալ նորմը խոչընդոտ է հանդիսանում երաշխիքների տրամադրման գործընթացում, ինչով պայմանավորված՝ առաջարկվում է տվյալ կետը ճանաչել ուժը կորցրած:	ընթերցմամբ ընդունված նախագծի հոդվածների համարակալումները:	
4.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 3-րդ հոդված**	«Մաքսային կարգավորման մասին» օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասն առաջարկվում է ճանաչել ուժը կորցրած: Նշված իրավասությունը	Ընդունվել է: Նախագծում լրացվել է նոր հոդված հետևյալ բովանդակությամբ՝	Ընդունվել է:

			«Մաքսային կարգավորման մասին» օրենքում նախատեսված է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում մաքսային մարմինների և պետական այլ մարմինների միջև տեղեկությունների փոխանակման կարգի սահմանման համար և չի ենթադրում մեկ միասնական կարգի սահմանում բոլոր պետական մարմինների հետ: Մասնավորապես, ներկայումս տեղեկատվության փոխանակման կարգավորումներ նախատեսված են տարբեր իրավական ակտերով՝ տարբեր պետական մարմինների հետ: Առանձին իրավական ակտերով սահմանված տեղեկությունների փոխանակման հարաբերությունները սահմանված են տարբեր գործընթացների շրջանակներում և տարբեր նպատակներով և դրանց մեկ ակտի շրջանակներում սահմանումը նպատակահարմար չէ: Հաշվի առնելով նշվածը, առաջարկվում է օրենքի տվյալ դրույթը ճանաչել ուժը կորցրած:	*«Հոդված 3. Օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:»:* Վերոգրյալով պայմանավորված՝ փոփոխվել են առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի հոդվածների համարակալումները:	
5.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 4-րդ հոդված**	«Մաքսային կարգավորման մասին» օրենքի 187-րդ հոդվածի 10-րդ մասն առաջարկվում է ճանաչել ուժը կորցրած: Հաշվի առնելով այն, որ պետական սահմանի անցման կետերում «Մեկ կանգառ»	Ընդունվել է: Նախագծում լրացվել է նոր հոդված հետևյալ բովանդակությամբ՝ *«Հոդված 4. Օրենքի 187-րդ հոդվածի 10-րդ մասը*	Ընդունվել է:

			համակարգի ներդրման արդյունքում պետական սահմանին հսկողական գործառույթներ իրականացնում են միայն ազգային անվտանգության ծառայությունը և մաքսային մարմինները, ինչպես նաև այն, որ «Մեկ կանգառ» համակարգի շրջանակներում ընդունվել են ինչպես տարբեր օրենքներում, այնպես էլ ՀՀ կառավարության որոշումներում համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որոնցով որևէ պետական մարմնի կողմից այլ պետական մարմինների գործառույթների համակարգման նորմեր չեն նախատեսվել, առաջարկվում է օրենքի նշված դրույթը ճանաչել ուժը կորցրած:	*ճանաչել ուժը կորցրած:»:* Վերոգրյալով պայմանավորված՝ փոփոխվել են առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի հոդվածների համարակալումները:	
6.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված (Լրամշակված նախագծի 5-րդ հոդված)**	«Մաքսային կարգավորման մասին» օրենքի 189-րդ հոդվածի 6-րդ մասից առաջարկվում է հանել «հսկողության գոտիներին ներկայացվող տեխնիկական պահանջները և մաքսային» բառերը և նշված հոդվածը լրացնել նոր՝ 7-րդ մասով, որով մաքսային հսկողության գոտիներին ներկայացվող պահանջների սահմանումը կվերապահվի ՀՀ պետական եկամուտների կոմիտեին:	Ընդունվել է: Հոդված 5-ը լրացվել է 2-րդ և 3-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ՝ *«2. 6-րդ մասից հանել «հսկողության գոտիներին ներկայացվող տեխնիկական պահանջները և մաքսային» բառերը.* *3. 6-րդ մասից հետո լրացնել նոր 7-րդ*	Ընդունվել է:

			«Մաքսային կարգավորման մասին» օրենքի 189-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային հսկողության գոտիները սահմանվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 319-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ կառավարությունը մաքսային հսկողության իրականացման նպատակով ՀՀ պետական սահմանի անցման կետերում, մաքսային ձևակերպումների վայրերում, մաքսային մարմինների գտնվելու վայրերում կարող է ստեղծել մաքսային հսկողության գոտիներ: Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մաքսային հսկողության գոտիներն են Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերը, ժամանակավոր պահպանման պահեստների, մաքսային պահեստների, ազատ պահեստների տարածքները, անմաքս առևտրի խանութների տարածքները և նույն օրենսգրքով սահմանված և (կամ) անդամ	*մաս՝ հետևյալ բովանդակությամբ.* *«7. Մաքսային հսկողության իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով մաքսային հսկողության գոտիներին ներկայացվող տեխնիկական պահանջները կարող է սահմանել Կոմիտեն:»:*	

			պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող այլ վայրերը: Ներկայումս Ժամանակավոր պահպանության պահեստներին և մաքսային պահեստներին ներկայացվող պահանջները սահմանված են «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 270-րդ և 276-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 07.09.2023թ. N1519-Ն որոշմամբ, ազատ պահեստներին ներկայացվող պահանջները սահմանված են «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 281-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 16.09.2021թ. N1530-Ն որոշմամբ, անմաքս առևտրի խանութներին ներկայացվող պահանջները սահմանված են «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 286-րդ հոդվածով, ազատ տնտեսական գոտիներին ներկայացվող պահանջները սահմանված են «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի 6-րդ հոդվածով և ազատ տնտեսական գոտիների ստեղծման մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով: Նշյալ իրավական ակտերի		

			շրջանակներում, ըստ էության, սահմանված են նաև տեխնիկական պահանջներ: Հաշվի առնելով վերոգրյալը, ներկայումս այլ պահանջների սահմանման անհրաժեշտությունը բացակայում է, ինչով պայմանավորված առաջարկվում է համապատասխան իրավասությունը նախատեսել թույլատվական բնույթի: Միաժամանակ, առաջարկվում է համապատասխան իրավասությունը վերապահել ՀՀ պետական եկամուտների կոմիտեին, քանի որ տվյալ դրույթն առնչվում է բացառապես մաքսային մարմինների իրավասությանը, ուստի անհրաժեշտության առկայության դեպքում համապատասխան նորմերը ենթակա են սահմանման մաքսային մարմնի կողմից: Միաժամանակ, նախատեսվում է նորմերը սահմանել ներքին իրավական ակտով:		
7.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 6-րդ հոդված**	«Մաքսային կարգավորման մասին» օրենքի 212-րդ հոդվածի 7-րդ մասում առաջարկվում է մաքսային մարմինների տեղակայման վայրերում, մաքսային գործառնությունների և մաքսային հսկողության իրականացման այլ վայրերում մաքսային	Ընդունվել է: Նախագծում լրացվել է նոր հոդված հետևյալ բովանդակությամբ՝ *«**Հոդված 6.** Օրենքի 212-րդ հոդվածի 7-րդ մասում «Կառավարությունը սահմանում է» բառերը*	Ընդունվել է:

			ենթակառուցվածքներին և տեխնիկական հագեցվածությանը ներկայացվող պահանջների սահմանման իրավասությունը վերապահել ՀՀ պետական եկամուտների կոմիտեին և նորմը նախատեսել թույլատվական բնույթի, քանի որ համապատասխան պահանջները ներկայումս արդեն իսկ նախատեսված են մի շարք իրավական ակտերով: Առաջարկը փոխկապակցված է սույն ամփոփաթերթի 2-րդ կետի հետ: Միաժամանակ, նախատեսվում է նորմերը սահմանել ներքին իրավական ակտով:	*փոխարինել «Մաքսային հսկողության իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով Կոմիտեն կարող է սահմանել» բառերով:*»: Վերոգրյալով պայմանավորված՝ փոփոխվել են առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի հոդվածների համարակալումները:	
8.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 7-րդ և 9-րդ հոդվածներ**	«Մաքսային կարգավորման մասին» օրենքի 229-րդ հոդվածի 4-րդ մասը և 260-րդ հոդվածը առաջարկվում է ճանաչել ուժը կորցրած: «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 229-րդ հոդվածի 4-րդ մասի շրջանակներում, ինչպես նաև օրենքի 260-րդ հոդվածի շրջանակներում նախատեսված իրավահարաբերություններն արդեն իսկ սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 30.03.2017թ. «Էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագրման	Ընդունվել է: Նախագծում լրացվել են նոր հոդվածներ հետևյալ բովանդակությամբ՝ *«**Հոդված 7.** Օրենքի 229-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:* ***Հոդված 9.** Օրենքի 260-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:»:* Վերոգրյալով պայմանավորված՝ փոփոխվել են առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի հոդվածների	Ընդունվել է:

			իրականացման և մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում չունեցող անձանց՝ մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգ մուտք գործելու կարգը սահմանելու մասին» N546-Ն որոշմամբ, որով նախատեսված են ինչպես անհրաժեշտ տեղեկությունների ձևավորման, այնպես էլ հայտարարատուների և այլ անձանց՝ մաքսային մարմինների կողմից կիրառվող տեղեկատվական համակարգերին հասանելիությանն առնչվող անհրաժեշտ կարգավորումները: Միաժամանակ, տվյալ որոշման համար հիմք է հանդիսանում օրենքի 78-րդ հոդվածի 8-րդ մասը: Միաժամանակ, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներքին իրավական ակտերով նախատեսված են նաև ոչ միայն մաքսային մարմիններին առնչվող, այլ նաև պետական եկամուտների գործունեության բոլոր ոլորտներում համապատասխան կարգավորումներ: Մասնավորապես, այդպիսի կարգավորումներ սահմանված են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2022 թվականի փետրվարի 28-ի	համարակալումները:	

			«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվության դասակարգման, տնօրինման և մակնշման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 366-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 218-Ա հրամանով, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2022 թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական ռեսուրսների գույքագրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 850-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 253-Ա հրամանով, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2022 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավասությունների կառավարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր		

			պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հուլիսի 13-ի թիվ 223-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 219-Ա հրամանով: Հաշվի առնելով նշվածը, առաջարկվում է կրկնություններից խուսափելու նպատակով օրենքի տվյալ դրույթները ճանաչել ուժը կորցրած:		
9.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 10-րդ հոդված (Լրամշակված նախագծի 17-րդ հոդված)**	Առաջարկվում է **Նախագծի 10-րդ հոդվածում (Լրամշակված նախագծի 17-րդ հոդված)** «իրավական» բառից առաջ լրացնել «ենթաօրենսդրական նորմատիվ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատվի իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ, ինչպես նաև հիմք ընդունելով «Նորմատվի իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը:	Ընդունվել է: Հոդվածում լրացվել են «ենթաօրենսդրական նորմատիվ» բառերը:	Ընդունվել է: